ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> փետրվարի 2013թվականի N 4 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ N 216 ՀԱՍՑԵԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 685-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով <<Գեղագիտության ազգային կենտրոն>> պետական փակ բաժնետիրական ընկերության 2013թվականի հունվարի 21-ի N Գ-1/1034 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան փողոց N 216 հասցեի գեղագիտական դաստիարակության կենտրոնի (անշարժ գույքի սեփականության վկայական 0232958) 1099,44քառ.մ ընդհանուր մակերեսով հասարակական նշանակության շենքը 3 (երեք) տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել <<Գեղագիտության ազգային կենտրոն>> պետական փակ բաժնետիրական ընկերությանը՝ Գյումրու մասնաճյուղի կողմից օգտագործելու նպատակով:
2. Սահմանված կարգով կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Անհատույց օգտագործման հանձնվող գույքի ըստ նպատակային նշանակության օգտագործման, պահպանման, շահագործման պայմանները և պահանջները մանրամասնել պայմանագրում:
4. Գույքի անհատույց օգտագործման տրամադրման հետ կապված ծախսերը կատարել <<Գեղագիտական ազգային կենտրոն>> պետական փակ բաժնետիրական ընկերության հաշվին:

Կողմ (18) **Դեմ (1)** **Ձեռնպահ (0)**

Գ.Ադամյան_____ **Լ.Բարսեղյան**_____

Ա.Բադեյան_____

Ա.Բաղրամյան_____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ.Հունանյան _____

Ն.Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե.Պողոսյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

Տ.Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ